

ՏԱՍՏԵԿԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

Օտարադպրոցացիք դիմում են ուղղակի
Тифлисское Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և պահուստ օրերէն):

Յայտարարութիւնը ընդունուած է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւարանիւր բառին 2 կոպեկ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Մշակի» խմբագրութիւնը խոնարհաբար խնդրում է իր թէ ներկայ և թէ անցեալ տարվայ բաժանորդներէն, որոնք մեզ պարտ են մնացել իրանց բաժանորդագինը, շուտով ուղարկել խմբագրութեանը «Մշակ» լրագրի վարձը:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրքաց յանձնաժողովը:—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Բարենորոգումները Թիւրքաց Հայաստանում Մակ-Լինի դրոշմը: Նամակ Թիւրքիայէ:—ՀՆՈՒԱԳԻՐ-ՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱ-ԿԱՆ: Կիրակնօրեայ դպրոցների առիթով:

ԹԻՐԻՔԱՅ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«Մշակի» ներկայ համարի արտաքին տեսութեան մէջ ընթերցողը կը կարգաւ Կ. Պոլսի «Messenger» լրագրից Թարգմանած մի յօդուած այն յանձնաժողովի մասին, որ կազմակերպ է Թիւրքաց Հայաստանում վերանորոգութիւններ իրագործելու նպատակով:

Թիւրք փաշաներից կաշառված Կ. Պոլսի եւրոպական լրագրում տպված այդ յօդուածի ընթերցանութիւնը սկսեալ զարմացեալ է կարդացողին: Սայիդ-փաշա, Մուսթաֆա փաշա, Բէկեր-փաշա, Բա-

շիդ-բէյ, Յարութիւն Գաֆեան,—բոլորն էլ բարձր ընդունակութիւններով տէր մարդիկ են, փորձված պետական անձինք են և այլն...

Ուր էին Թաղզված մինչև այժմ այդ բարձր տաղանդները, այդ պետական հանձնարները: Եթէ Թիւրքիան ճշմարիտ այդ տեսակ երեւելի պետական անձինք ունէր, ի՞նչի մինչև այժմ չէր վերանորոգվում:

Խեղճ Թիւրքաց Հայաստանը պէտք է սրբանցից սպասի իր բարեկարգութիւնը:

Կարելի է առաջուց հաստատապէս ասել որ այդ յանձնաժողովը, ինչպէս բոլոր նախընթացները, ոչինչ հետեւեալի չի հասնի և Թիւրքաց Հայաստանը նոյն անկարգ և թշուառ դրութեան մէջ կը մնայ, մինչև որ Թիւրքաց կառավարութիւնը չը զիմի ժողովրդի օգնութեանը, չը հարցնի բնակիչների կամքը և չը մասնակցեւ տայ իր յանձնաժողովների մէջ նոյն իսկ երկրի ազգաբնակչութեան կամքով ընտրած պատգամաւորներին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԷՔՍԱՆԳՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են: «Այս տարի մեզանում ձմեռը խիստ ու երկար էր: Այդ ժամանակ ամենքը ուրախացան զարմանալով, բայց ապրիլի 14-ին նորից սաստիկ ցորեն սկսեց վեցան և մեծ քանակութեամբ ձիւն եկաւ: Մեր

չուս, կամ թէ նրանից, որ դպրոցական պրակտիկայով պարապողները իրանց աշխատութիւնը ծանրաբեռնել չեն ուզում: Չմեծ փառանքով պատահանել այդ հարցին. բայց իմ սրբազան պարտք եմ համարում հասարակութեան ուշադրութիւնը դարձնել այն բանի վրայ, թէ ինչ դեպքում կարող են կիրակնօրեայ դպրոցները օգուտ տալ մեր հասարակութեանը: Կիրակնօրեայ դպրոցները կարող են ունենալ երկու նպատակ:—Նախ՝ նրանք կարող են ուսուցանել գրագիտութիւն անգրագիտ չափահասներին կամ անգրագիտ հասակին և երկրորդ՝ դարգացնել, ընդլայնել և բարձրագոյն կարողութեան, կատարելագործել այն գրագետ անձանց տեղեկութիւնները ու փութութիւնները, որոնք ձեռք են բերել նրանք դպրոցում կամ տանը առանձնապէս: Յաճախ թէ քաջաբնուած և թէ վերելքով կարելի է գտնել այնպիսի անգրագետ չափահասներ և երիտասարդներ, որոնք անպիսի հոգսերով ծանրաբեռնած լինելով և աղքատութեան պատճառով չունենալով միջոցներ յաճախելու ամենօրեայ դպրոցներ, պատրաստ են նուիրել այդ գործին իրանց՝ տօն օրերի հանգստութեան մի քանի ժամեր: Կան մեր ժողովրդի մէջ ոչ միայն երիտասարդներ ու չափահասներ, որոնք ժամանակ չունեն յաճախելու ամենօրեայ դպրոցներ և որոնք պատրաստ են նուիրել իրանց կիրակի սպաս ժամերը գրագիտութեան, այլ և կան և այնպիսի չափահասներ, որոնք իրանց տղիտութեամբ բոլորովին յուսահատված լինելով՝ պատրաստ են մինչև անգամ կուռով վերցնել գրագիտութիւնը, առանց որոյ, ինչպէս կարծում են, ներկայումս դժուար է ապրել: Գրան թող ապացոյց լինի Շամախու թեմական դպրոցի մօտ բացած կիրակնօրեայ դպրոցը՝ դարձել և անդադրել արհեստաւոր դասի համար, որը ունենալով միայն երեք ուսուցիչ ու ստիպված լինելով իր 45-ի չափ աշակերտաց երկու դասակարգի բաժնելու, ստիպված է այս բոլոր պէտքերը իր ընդունակութիւնը անդադրեցնել:

Գ.

քաղաքում փողոցները սաստիկ անմաքուր են. անմաքնակի ցեխ է կանգնած փողոցներում, այնպէս որ անցողաբձ անելը անկարելի է: Այժմ պ. դատաւարը հրամայել է խճուղի չինել մի երկու գլխաւոր փողոցներում:

Երբուրմից ստացած մասնաւոր նամակներից տեղեկանում ենք որ այդտեղ ձմեռը այս տարի սովորականից ցուրտ և երկար էր: Մինչև այժմ ձիւնը դեռ չէ հալվել Երբուրմի դաշտերում: Յոյս կայ որ ցամաքը այս տարի աշոգ կը լինեն:

Մեզ գրում են Երբուրմից որ այդ քաղաքի չըրջապատութեամբ թափառում են քիւրդ աւազակների խմբեր: Նորեւումս այդ խմբերից մինը մօտեցել էր Արծթի գիւղին և կամեցել էր թալանել գիւղի ջաղացը, բայց հայ ջաղացապանը իր օգնականներով քաջութեամբ դուրս են եկել իրանց անձն ու սեփականութիւնը պաշտպանելու համար և ատրճանակներ արձակելով քիւրդերի վրայ, վիրաւորել են աւազակներից մի քանիսներին: Տեսնելով այդ անպատեւել անձնապաշտպանութիւնը, աւազակները փախել են, տանելով իրանց հետ վերադարձնելին, բայց թողնելով մինչև անգամ իրանց ունեցածը: «Այս, աւելցնում է թղթակիցը, ինչ կը նշանակի անձնապաշտպանութիւնը»:

ԳՆԱԶԱԿԻՑ մեզ գրում են: «Անձեալ մարտ ամսին վախճանվեցան՝ քաղաքիս բանտապետ, գանձակցի Բեկար-բէյ Բալուղեանց և Սրբ. Լուսաւորիչ եկեղեցու նախկին երեսփոխ պ. Խաչեան: Առաջին հանգուցեալի պըին, արկին Ելէնա Բալուղեանց, յարգելով իր ամուսնու յիշատակը, նոյնից քաղաքիս օրէնքաց դպրոցին՝ 300 ռուբլ և բարեգործական ընկերութեանը 50 ռուբլ: Իսկ հանգուցեալ Խաչեանի որդին, Յարութիւն Խաչեան նուիրեց նոյն օրէնքաց դպրոցին 50 ռուբլ: Յան-

րին՝ խանգարումն չը պատճառելու համար, որոնք կարծես ուժով են ուզում ներս մտնել: Այդպիսով ներք գլխաւորապէս չար նպատակ չունենալով, ուսման վերջին նպատակը համարում են կարգաւ—գրելու այն պըրցէսը, որին շատ հեշտ կերպով կարելի է հասնել, եթէ ուսման հնչական եղանակը դժբաղդի: Գժուար չէ հասկանալ, որ եթէ աշակերտները նուիրելով ուսմանը չարութեամբ երկու-երեք ժամ, մնացեալ ժամերը կամ օրերը զիրը անգամ ձեռքները չեն վերցնի, այն ժամանակ ուսման արգասիքը կը լինի շատ աննշան և անմիջական: Բայց շատ և շատ տարիներ են հարկաւոր, որ այդ տեսակ աշակերտները կարգաւոր արագ, տրամաբանօրէն, որոշ առաքանութեամբ և տրոհութեամբ և առհասարակ անցնէին գիւղական կամ ծխական դպրոցների համեստ ծրագիրը: Այդ տեսակ կիրակնօրեայ դպրոցների հետեւեալները գիւղերում կարող են լինել աւելի աննշան, և այդ այն պատճառով, որ գիւղացին չունի միջոց որ կիրակի օրերն յաճախ դպրոց գիւղական աշխատանքի կէս տարին և որ այդպիսով գիւղական կիրակնօրեայ դպրոցը պիտի ժողովէ իր աշակերտաց ամբողջ տարվայ ընթացքում մօտաւորապէս 25—30 անգամ, պարապելով իւրաքանչիւր անգամին զէթ միայն 2—3 ժամ: Աշակերտի տէրը, եւանդը և ցանկութիւնը, որոնք կարող էին գրգիլ նրան զայն ընթերցասիրութիւնը տանը առանձնապէս, տարաբաղաբար ոչ թէ կը նպաստէին գործին, այլ կարող էին մինչև անգամ վնասել, ըստ որում այն աշակերտին միայն կարելի է թոյլ տալ տանը կարգաւ առանձնապէս, որ կարծում է բոլորովին դիտակցաբար, այդպէս աշակերտը սովորութիւն կանէ կարող սխալ և բառերը բոլորովին անձնատէր: Այդ դեպքում կարող էր շօշափելի օգուտներ տալ կիրակնօրեայ դպրոցներին մի այնպիսի ձեռնարկի դժբաղդութիւն, որ միջոց է տալիս աշակերտին ինքնուրոյնաբար ճանաչել գրագիտութեան գաղափրը, այն է՝ գրել—կարդալը:

կալի է որ մեր հարուստները հետեւին այս տիկնոջ և երիտասարդի բարի օրինակին»:

Մեզ գրում են հետեւեալ: «Շիրակի վիճակում լուր էր տարածվել թէ Շիրակի գաւառապետ պ. Շաղաբաթով շուտով փոխադրվելու է այստեղից դէպի Կարս, իսկ նրա տեղը նշանակվելու է Շիրակում մեզ մի անձանի մօտ: Այդ լուրը ըստ սովորույց յետոյ, շիրակեցիք ուղարկեցին Կարսի պ. Նահանգապետին պատգամաւորներ, խնդրելով նորին գերագնացութեան որ չը փոխադրէ Շիրակից մեր գաւառապետին: Բայց պ. Նահանգապետը մերժեց մեր այս խնդրքը, ասելով որ պ. Շաղաբաթով վիճակութիւնը Կարսի մէջ աւելի էլ հարկաւոր է, քան թէ մեր գաւառում: Այդ գաւառապետը շատ էր սիրված մեզանում, երբէք ունեցած չենք նրա պէս մի կառավարիչ»:

Ապրիլի 15-ից մեզ գրում են ԱՐԳԻՆԱՅԻՑ: «Անցեալ օրը մի տասնեակ տարեկան տղայ Փիրվալի դեղագի, ընկնելով Կարս-չայ գետը, անյայտացել է գետի ալիքներում: Մինչև այժմ խեղճի դիակը գտնված չէ»:

ԹԻՖԼԻՍԻ հայերը շատ դժուարութեամբ փող են նուիրում մի աղքատին, կամ բարեգործական նպատակի համար, իսկ քէֆի համար շատ հեշտութեամբ փող են տալիս, նոյն իսկ այժմեան թանգութեան ժամանակ: Մեզ պատմում են թէ Թիֆլիսի Բաղազիս ան ալի վաճառականները երկու օրվայ մէջ, երեկ և այսօր, իրանց մէջ հաւաքեցին մօտ 1000 ռուբլ և պէտք է գործ դնեն այս գումարը, Օրթոնալա ասված այգիներում երկուշաբթի օր մի մեծ քէֆի վրայ: Աստուած բարի վայելում տայ: Այս ճշմարիտ օգտաւէտ և բարի ձեռնարկութեան վրա գործ դրված գումար....

ն կ ա ը ն ե ռ ը Վ *): Փոքր ի շատէ փորձառու ուսուցչին չը պէտք է դարձանք, եթէ մենք պնդելու լինենք թէ այդ տեսակ ձեռնարկի վրա աշակերտը կարող է սովորել գրագիտութիւնը մինչև անգամ առանց ուսուցչի աշխատութեան. բաւական է, որ աշակերտը կարողացաւ մի անգամ գիտակցաբար կապել—միաւորել իր կուճակի հետ միաւորել, որպէս զի այդտեղից մնացած տառերը սովորել ինքն վերալինելով ձեռնարկի օգնութեամբ, բոլորովին ինքնուրոյն աւարտ: Բայց մէնակ հէնց դրա մէջ չէ կայանում այդ տեսակ ձեռնարկի գլխաւոր օգուտը կիրակնօրեայ գիւղական ու քաղաքային դպրոցների համար, այլ նրա մէջ, որ այդ տեսակ ձեռնարկով գրել—կարգաւ ուսուցանելու եղանակը դարձեցնում է աշակերտին ինքն ա գ ո ը ը ու ն է ու թ իւ ը իւ ը, տալիս է նրան միջոց զննել, մտածել և եզրակացնել: հէնց առաջին դասից աւարտելի կամ բառի անունը գրել մէջ կապում է նոյն իսկ ձեռնարկի մէջ նկարած առարկայի հետ: Այդ տեսակ ձեռնարկներ տարաբաղաբար չը կան մեղում և գուցէ դեռ երկար պիտի սպասենք դրանց երեւումին. այն ինչ այդպիսիները արդէն մեծ ընդունակութիւն ու համակարգ են գտել եւրոպական մանկավարժների միջազգային կոնֆերանցիայում: Իսկ եթէ մեր դպրոցական փորձը կարգաբարձ մեր կնիքագրութիւնը, այն ժամանակ մեր կիրակնօրեայ դպրոցները, չնորսիլ յիշեալ դպրոցական ձեռնարկի, շատ մեծ նշանակութիւն կը ստանան մեր ժողովրդի համար: Այն ժամանակ անշուշտ այդ տեսակ դպրոցները պիտի յարգած ու գնահատած ոչ միայն այն պատճառով, որ արհեստաւոր մարդուն հնչու է գալ դպրոց չարաք մի անգամ, քան ամեն օր, այլ և այն պատճառով, որ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԳՊՐՈՑՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Ես մտադրութիւն չունեմ այստեղ նկարագրել ընթերցողի հասարակութեան Ռուսաստանում կիրակնօրեայ դպրոցների ու լուսարարների խնդրի ծագման ժամանակ հասարակութեան ու գրականութեան արամադրութիւնը, նոյնպէս և աշխարհական և հոգեւոր կառավարութեանց մէջ այդ դպրոցների առիթով եղած կարծիքները 60 թուականներում. այդ ամենը որքան հետաքրքրական էր, այնքան ևս անյարմար թղթակցութեան համար: Աւելորդ եմ համարում ակնարկել այստեղ և այն թէ մեր պարբերական գրականութիւնը որպիսի համակարգով խօսեց կիրակնօրեայ դպրոցների ու լուսարարների մասին, թէ ինչպէս «Մշակը» անցեալ տարի մեծ համակարգով ուղղունց փաթեանեանցիկ ձեռնարկութիւնը՝ բնաւ առաջին անգամ (եթէ չեմ սխալվում) մեր մէջ կիրակնօրեայ դպրոց չափահաս անդադրեալ դասի համար Թիֆլիսի Հաւաքարի թաղում *), թէ ինչպէս ցանկացաւ «Մշակը» այդ տեսակ օգտաւէտ ձեռնարկութեանց ընդհանրականութիւնը բոլոր մեր հայաբնակ գաւառներում..... Սակայն մինչև այժմ մեր լրագրութեան մէջ կիրակնօրեայ դպրոցների կամ լուսարարների մասին չեղեցաւ ոչ մի լուր, ոչ մի տեղեկութիւն. կարծես թէ մեր մէջ ամեն բան գրվում է հէնց գրելու համար: Ինչից է արդեօք. նրանից, որ հասարակութիւնը կիրակնօրեայ դպրոցների օգտաւէտութիւնը չէ ճանա-

*) Ցանկալի կը լինէր մեզ իմանալ թէ՛ փաթեանեանցիկ կիրակնօրեայ դպրոցը շարունակում է իր գոյութիւնը, թէ ոչ:

*) Այդ տեսակ ձեռնարկի ու նրա դժբաղդութեան հետ կաշխատեմ ծանօթացնել ընթերցողիս միւս անգամ:

Մեր թղթակիցը գրում է մեզ ԲԱԳՈՒԻՑ հե-տևեալը: «Ապրիլի 14-ին մեր հայ սիրողների խումբը տուեց երրորդ ներկայացում չքաւոր աշա-կերաների համար: Խաղացին «Բեկերով կին» կոմէդիան, հեղինակութիւն Մէլքոնեանցի և «Արեւի-կընթ» վոյեւժի, հեղինակութիւն Մազաթեանի: Դնորհակալութիւն ենք յայտնում պ. Սափարեան-ցին, որ խմբի առնեսալիքի և հաշտապահ լինելով, ներկայացումը գլուխ բերելու համար մեծ ներդո-թիւններ է կրում: Երեք ներկայացումից դուստ արդիւնք մնաց 700 բուրլ: Հինգերորդ դաստանն աշակերտները սպասում են օգնութեան»:

Քաթայիսից ոչ շատ հեռու գտնվող ՉԽԱՐ գիւղից մեզ գրում են: «Չխար առաջնակարգ գիւղերից միսն է, լիառատ ամեն կենսական պի-տոյքներով, քաղցրահամ ջրով, չըջալատված այ-գիներով: Օդը այստեղ բարեխառն է և գիւղի զիւրը շատ ցեղեցիկ է: Գիւղացիք պարապում են գինեգործութեամբ: Չխար գիւղը ունի 140 տուն բնակիչ, որոնցից 70-ի չափ հայեր են, իսկ մնա-ցեալները վրացիք: Հայերը աշխատող, գործու-նեայ և համեստ ժողովուրդ են, բայց զուրկ նիւ-թական միջոցներից: Նրանք գրեթէ բոլորովին մոռացել են իրանց մայրենի լեզուն և խօսում են վրացերէն: Նոր սերունդը սկսում է քիչ թէ շատ սովորել հայերէն, չնայած քանի մի ժամա-նակ առաջ այստեղ հիմնված երկսեռ դպրոցի, որ կառուցվել և պահպանվում է պ. Ալեքսանդր Հալիպեանցի հաշով: Գիւղում կայ մի կիսա-բանդ հայոց եկեղեցի, իսկ նորը չլինելու համար, ասում են, ժողովուրդն սննի միմիայն չորս հա-զար բուրլ գումար, որով ի հարկէ, քարեայ ե-կեղեցի, ինչպէս հայերը միշտ սովորութիւն ու-նեն չինելու, չի չինվել»:

Երբ կը լինի որ հայերը մտանքն չենել համեստ, էփանալին շէնքեր, որոնք կարողանան ծառայել դպրոցների համար, իսկ կիրակի օրերը դպրոցի դահլիճը կարողանայ ծա-ռայել ժամատացութեան համար: Իր նամակի վերջում թղթակիցը շատ գովում է Չխար գիւղի քահանայ Եղիշի Գաբամանեանցին և նոյնպէս դպրոցի ուսուցիչ Կարապետ Սուքիասեանցին:

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են ապրիլի 17-ից հե-տևեալը: «Այսօր սպասում ենք այստեղ կովկա-սեան քաղաքական մասի կառավարչապետ, իշ-խան Գոնդուկով-Վորսակովի դալուն: Նրան շատ լաւ ընդունելութիւն է պատրաստվում այս-տեղ»:

որ հեշտ է ուսուցչի համար ևս դաստիարակ աշա-կերտաց ճիւղաբար շարքով մի անգամ, քան ամեն օր: Սակայն պարզ է, որ ամենօրեայ երեկեան դպրոցները կը տան աւելի լաւ արդիւնք, քան դաստասութիւնը շարքով մի անգամ և որ այդ պատճառով անգործութեան հասակաւորաց համար ուսման մէջ յատկապէս ընդունելի են ցոյց տալու հա-մար պիտի աշխատել բանալ և գիւղերում և քա-ղաքներում գլխաւորապէս ոչ թէ կիրակնօրեայ դպրոցներ, այլ և երեկեան դպրոցներ, այսինք-նայ այնպիսիք, որ կարողանային յաճախել ան-գործականները երեկոցեան ամեն օր. ցերեկվայ աշ-խատանքից յետոյ գիւղացիք, ամբողջ ձմեռը, կա-րող են գիւղերում երեկոցեան յաճախել դպրոցներ. գտնէ այդ հնարաւոր է գլխաւորապէս ամառը ու գարնանը:

Բոլորովին ուրիշ հարց է կիրակնօրեայ դպրոց-ները այն աշակերտաց համար, որոնք աւարտել են ուսման ընթացքը դպրոցում կամ պատրաստվել-են տանը առանձնապէս: Եթէ կիրակնօրեայ դպ-րոցների նպատակն է կրկնել անցածները, լրաց-նել թերութիւնները, վերջացնել կիսակատարը, ընդլայնել աշակերտաց աշխատանքները, ինչ-պէս ինչպէս նրանց զարգացմանը ու պատրաստու-թեանը և միջոցներ տալ դարձանալու ինքնակա-րութեան մէջ, ապա ուրեքն նրանք կարող են տալ չօգտակիլ օգուտներ մինչև անգամ այն սա-մանակալ է անհշտ ժամերում, որ սովորաբար գործադրում են կիրակնօրեայ դպրոցները: Կիրակ-նօրեայ դպրոցները հարկաւոր են գլխաւորապէս թէ քաղաքներում և թէ գիւղերում և այն աշա-կերտաց համար, որոնք աւարտել են ուսման ըն-թացքը ծխական կամ գիւղական դպրոցներում: Աշակերտը զուրս գալով դպրոցից այն հասակում, երբ նա դեռ նոր է սկսում կարգալ գիտակցաբար, երբ նրա մէջ դեռ նոր է ծագում ուսման ճաշա-կը, մտնում է մեծ մասամբ այն հասարակութեան մէջ, որի անդամներն մէջ գրադիտութիւնը հա-գուալիւս բան է համարվում. այն ամենը, ինչ

Առաջին դաստիարակները յօդուս հայոց Բնդ-հանուր Ուսուցչական ժողովի կայանալու է այսօր, ամսիս 24-ին, շաբաթ օր, 8 ժամին երեկոցեան Արծրունու թատրոնում: Կարգաւոր են պ. Արիստ-դոմ Գոլանյանիսեան «Հայոց ընդհանուր ուսուցչա-կան ժողովի նշանակութեան և նպատակի վրա», և պ. Ալեքսանդր Երեցեանց «Բարեկրթութեան վրա հայոց մէջ»: Հետեւեալ դաստիարակներին օրերը կը յայտնվեն լրագրիւնների միջոցով: Իւրա-քանչիւր մի տոմսակ ունեցողը իրաւունք ունի ոչ միայն առաջին և երկրորդ դաստիարակ-թիւններին ներկայ գտնվել, այլ և երրորդին, եթէ այս վերջինը նոյնպէս յաջողի կազմելու:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐԵՆՈՐԳՈՒՄԵՆԻ ԹԻՒՌՔԱՅ ՀԱՅԱՍՏԱ-ՆՈՒՄ

Կ. Պօլսի «Messenger» լրագրում կար-գում ենք հետեւեալ յօդուածը:

Ճիշդ նշաններ ցոյց են տալիս որ վարչա-կան վերանորոգումների հարցը ասիական նահանգներում շուտով ստանալու է իր լու-ծումը: Այդ հարցը սուլվածքն արդէն է ա-ռել բայց բնականապէս չէ կամեւում քննա-դատութեանն ենթարկել միւս հարցերից ջուր: Նորին մեծութիւնը ձանաչեց որ Փոքր-Ասիայի վարչութեան կազմակերպութիւնը շատ պակասաւոր է, բայց որ պետութեան միւս մասերն էլ նոյնչափ կարօտ են վերա-նորոգութիւններին: Սուլվածքն արհամար-հանքով չէ վերաբերվում դէպի հայերի դանդաղանքը, բայց իր արդար դատողու-թեամբ գտնում է թէ հայերը իրաւունք չունեն պահանջել որ այդ գանգաւորներն բաւականութիւն արվի նախ քան բաւակա-նութիւն արվի Թիւրքիային հպատակ միւս բազմաթիւ ցեղերի պահանջներին: Ամիս-ների ընթացքում պալատում կայացած խոր-հրդերը այդ ուղղութեան էին հետեւում: Կառավարութիւնը շատ լաւ էր հասկանում որ այդ ազգաբնակչութեան իրական պէտ-

քերը, ինչպէս և մի օր և է այլ ազգաբնա-կութեան, չեն կարող ըմբռնված լինել օ-տար կառավարութիւններից: Այն կրիտի-կական դրութեան մէջ, որի մէջ գտնվում է երկրը և որի պատճառով աններելի է ան-խոհեմ քաղաքականութիւնը, իմաստուն էր մտածել որ օտար ճշման պակասելը ան-հնարին էր ձեռք բերել շուտաւիթ միջոց-ներով, որովք ապագայում մեծ զօւարու-թիւններ կը պատճառէին: Ինչդրի երկար և խոհեմ քաղաքականութիւնը, յետոյ, որի ժամանակ սուլվածքն միշտ աչքի առջև ու-նէր խնդրի նշանաւոր լինելը, երեւում է թէ վճռվեցաւ, ըստ սկզբունքի, որ կը կազմվի մի յանձնաժողով պետութեան ամենաընդու-նակ և ամենազորեղական մարդկանցից, որ-պէս զի ձեռք առն անհրաժեշտ վարչական վերանորոգութիւնները գործադրութեանը ոչ թէ միայն Փոքր-Ասիայում, բայց և Կայսե-րութեան բոլոր նահանգներում: Գանձա-ժողովի կազմակերպութիւնը դեռ ևս պաշ-տոնապէս յայտարարված չէ, բայց մի քանի անուններ արդէն յայտնված են, որոնք երեւի կը մասնակցեն այդ յանձնաժողովին: Բնա-րութիւնը գերազանց է: Սայիդ-փաշա որ նորերումս Արեւիկաբաղոսի նահանգապետ էր, հաւանական է որ յանձնաժողովի նա-խագահ կը նշանակվի: Կա աղին, իսկալի-թիւն և որոշ համոզմունքներ: Կանդիդատ-ների թիւում հաւանական է որ կը լինեն Գալի Աճմէդ-Մուխթար փաշա, Ճշմարիտ ազգապետ, սառնամարտ, զգոյշ, քաջամարտ և գործնական մի անձ: Բէշիք-բէշի անունը երրորդն է, որ յիշված է կանդիդատների ցուցակի մէջ. դա տաղանդաւոր մի երիտա-սարդ է, որի նշանաւոր ընդունակութիւն-ները քաղաքական գործերը վարելու նկա-տել է արդէն սուլվածքն արամութիւնը և որ ընտրված էր անցեալ ձմեռ ամենախոր-հրդաւոր յանձնարարութիւնները կատարե-լու Բերլինի մէջ: Որպէս չորրորդ անգամ

յանձնաժողովի յիշվում է Գարուլին Է-ֆենդի Գադեան և նա, անկասկած, կատա-րեյապէս արժանի կը լինի այդ կոչմանը: մի բարձր ընդունակութեան և պաշտօնա-կան գործերի մէջ փորձառութեան հետ, նա միացնում է մի էական յատկութիւն, այն է անձնական հաւատարմութիւն դէպի սուլվածքն: Վերջապէս Բէշիք-փաշայի անու-նը լրացնում է ցուցակը: Ասում են թէ նո-րին գերազանցութիւնը լինելու է յանձնա-ժողովի փոխնախագահ: Նրա վերին աստի-ճանի հետաքրքիր գեղեցւումը Փոքր-Ասիայի դրութեան վրա, որ հիմնված էր տեղի վրա արած բոլոր հանգամանքների նրա խղճիւ-տաւոր ուսումնասիրութեան վրա, ցոյց է տալիս որ նա ընդունակ է մեծ և գործնա-կան ծառայութիւններ մատուցանել յանձ-նաժողովին: Կարելի է յանձնաժողովը այլ կազմակերպութիւն կունենայ, բայց մի բան, որի վրա մենք կը ցանկայինք առանձին ու-շադրութիւն դարձնել, այն է որ անցեալ ամիսների խորհրդակցութիւնները ապար-գիւն չեղան և որ նրանք առաջնորդվեցան, չը նայելով այլ և այլ արգելքների, մի բա-րի հետեւանքի, որ այսօր իրադրութեան վը-րա է: Սուլվածքն նախ և առաջ հաստա-տապէս իրան պահպանեց ամեն տեսակ վարչական սխալմունքներից: Նորին մեծու-թիւնը նախապատեւեց ենթարկվել անձնա-կան անյարմարութիւններին, քան թէ ան-խոհեմաբար շտապեցնել գործը: Այսօր, գործի մի լուրջ քննութեանց յետոյ, սուլ-վածքն պատրաստ է գործել կատարելապէս արդարացի և դրական կերպով:

ՄԱԿ-ԼԻՆԻ ԳՈՐԾԸ

„Голосъ“ լրագրի Լոնդոնի թղթակիցը հետեւեալ կերպով նկարագրում է Մակ-Լինի դատաւարական գործը: Գանցաւորի դա-տաւորները, մեղադրողը և պաշտպանը ա-մենանշանաւոր իրաւաբաններ էին: Անգլիայի

զի բոլոր աշակերտաց, մինչև օր. քան տարեկան հասակը, որոնք իրանց կեանքը անցուցած են դպրոցում, թէկուզ երկու կամ երեք տարի: Բայց ժողովը այդ բոլորին և քննութեան ենթարկել շատ դժուար է և գրեթէ անկարելի: Եթէ հարա-ւոր լինէր, այն ժամանակ կլինային թէ մինչև, որ աստիճան դպրոցի յետքերը մնացել են այդ մարդկանց վրա, թէ մինչև որ աստիճան նրանք կարգալ գիտեն զիրե կամ լրագրի գիտակցաբար, յայտնել գիտեն իրանց միտքը գրելով, գրել գիտեն թիւն և լուծել գիտեն խնդիրները: Այդ քննութիւն-ները մի ալ կողմից գուցէ ցոյց տուած կը լինեն թէ ինչպէս սակաւ են դրում կամ կարգում մեր գրադեանքը, որքան աղքատ են մեր մէջ բեւ-լետիստիքական գրութեանը և որքան թուականում են ու մոռացվում այն բոլոր գիտութիւնները ու տեղեկութիւնները, որոնք ձեռք են բերված ըս-կալական դպրոցներում հաղար ու մի գիտարու-թիւններով: Սակայն ամենիս հասկանալի է որ եթէ աշակերտը իր ուսման ընթացքը դպրոցում աւարտելուց յետոյ ինքնազարգացման շաղով յա-ռաջ չի երթայ, նա անպատճառ. դէպի յետ կը քայլէ: Դպրոցից դուրս գալու օրից կը խզվի նրա ու դպրոցի միջի եղած բարդական կապը. նրա մէջ կանխեւորանայ ու կը մարի դպրոցի աշխատան-քը, որի մասին գուցէ նա յիշէ միայն այն ժամա-նակ, երբ ձակառորդիւր կընծայէ նրան մի դաւակ, որին, յիշեցնելով իր դպրոցական կեանքի ուրախ և տխուր ժամերը, կուղարկէ դպրոց ուսանելու: Ճշ-մարիտ է, թէ և դա արդիւնքն էլ ներկայիս ժո-ղովրդական լուսաւորութեան գործին ծառայող-ները չը պէտք է անհշտ համարեն, բայց որքան աւելի լաւ կարող էին լինել մեր դպրոցների ար-գիւնքները, եթէ գործը այնպէս կարգադրվէր, որ աշակերտը իր ուսումը աւարտելուց յետոյ կիրա-կի և օժոն օրերին մի քանի ժամ նայէր այդ դպ-րոցի ներքը, որի մէջ նա անցրել է իր մատաղ կեանքի ամենաթանկագին տարիները: Կարելի է երաշխաւորել, որ այդ տեսակ կիրակնօրեայ դպ-

րոցները մեղմում անշուշտ կը գտնեն աշակերտ-ներ ու լուսաւորութեան գործին ծառայող ուսու-ցիչներ, եթէ միայն մեր դպրոցների հոգաբարձուք և երեսփոխանք ցանկութիւն յայտնէին բանալու կիրակնօրեայ դպրոցներ և մի և նոյն ժամանակ վարձատրէին նոյն մէջ պարագիւր ուսուցիչներին: Մեր ազգային դպրոցների հոգաբարձուք իւրաքան-չիւր քաղաքային ծխական և գիւղական դպրոցի վրա տարեկան ծախսում են միջին թիւով եթէ չեն սխալվում, 300—800 ռ.: Թող նրանք ապա-հովանեն ուսուցչաց աննախանձիկ դրութիւնը՝ վարձատրելով գիւղական միակ ուսուցչին՝ կիրակ-նօրեայ երկու ժամ դաստիարակութեան համար թէ-կուզ 2 ռ., իսկ քաղաքային ծխական դպրոցի եր-կու ուսուցչաց՝ կիրակնօրեայ երեք ժամ դաստիա-րութեան համար—3 ռ.: Տեսնեք այժմ որքան ծախս կերթայ իւրաքանչիւր գիւղական ու քաղա-քային կիրակնօրեայ դպրոցի վրա, ընդամենը 40—105 ռ., որովհետեւ մենք իրաւունք ունենք հաշուել ձմեռվայ և մասամբ էլ աշնանային պա-րագիւնները գիւղերում, այսինքն 20 կիրակի, իսկ ձմեռնային, աշնանային ու գարնանային պա-րագիւնները քաղաքներում՝ 35 կիրակի: Ուրիշ խօսքով, հոգաբարձուք ծախսելով տարեկան 40—105 բուրլի, նոյն մի և նոյն ժամանակ ապահա-վացրած կը լինեն ընդ միշտ իւրաքանչիւր գիւղա-կան ու քաղաքային ծխական դպրոցի վրա արած 300—800 ռ. ծախքը: Կարծես թէ դրա մասին երկար պիտի մտածել, չը խօսելով դեռ մարդու-թեան բարոյական և ուրիշ սրա նման բարձր սկզ-բունքների վրա: Շատերը կը հարցնեն. արժէ մի-թէ բանալ այդ տեսակ կիրակնօրեայ դպրոցներ, որ պիտի աւանդվեն ամբողջ տարվայ ընթաց-քում 40—105 դաս, հաշուելով իւրաքանչիւր կի-րակնօրեայ դաստիարակութիւնը 2—3 ժամ մի քանի աւարականները:

Համախառն թեմական դպրոցին ու տեղւոյս ուսու-քաղաքային ուսումնարանին կից երկու նորաբաց կիրակնօրեայ դպրոցները ապացուցանում են, որ

մէջ մինչև այժմ պահպանված հին սովորութեան համեմատ քրեական գործերը ամենից առաջ յանձնվում է «երդուեաների մէջ ժողովին» (Grand jury), որ առանց մեղադրվածի պաշտպանի փաստաբանութիւնները լսելու վճռում է, արդեօք գործի մէջ բաւական պատճառներ կան նրան դատաւանական քննութեանը ենթարկելու համար: Այս անգամ երգվեալների մեծ ժողովի առաջ գործի էութիւնը պատմեց զինաւոր դատաւորը. «Պետական յանցանքները ներկայումս Անգլիայի մէջ շատ սակաւ են պատահում, ասեց նա: Անգլիական ժողովրդի ահագին մեծամասնութիւնը բաւական է կառավարչական այժմեան ձեւից և յարգում է թագուհու բնաւորութիւնը և առաքինութիւնները: Իմ նպատակը չէ գովել նորին մեծութեանը: Ես մտադիր եմ միայն նկատել, որ մինչև անգամ անգլիական գահի վրա մեր սիրելի թագուհու կեանքը, ինչպէս և ուրիշ թագաւորների, ապահով չէ կամ խելագար կամ ընդհանուր անկարգութիւն պատճառել ցանկացող անձանց յանցաւոր փորձերից: Երբեմն թագաւորապետութեան գործը կատարում են այնպիսի անձինք, որոնք իրական կամ երեւակայական պատճառ ունեն իրանց վիճակից անբաւական լինելու համար և որոնք ցանկանում են հասարակութեան ուշադրութիւնը անպատճառ իրանց վրա դարձնել: Անգլիական օրէնքների համեմատ այդպիսի յանցաւոր գործողութիւնները պետական գաւազանութիւն են համարվում, իսկ նրանց գործողները պետական դատաւաններ:» Երգվեալների ժողովը յայտնեց, որ Մակ-Լին պէտք է ենթարկվի դատաստանին, մեղադրվելով պետական դատաւանութեան մէջ: Յանցաւորը ասեց, որ իրան մեղաւոր չէ խոտորվում: Մեղադրվածի պաշտպանը մինչև անգամ չը փորձեց հերքել մեղադրական փաստերը: Պաշտպանութեան ամբողջ նախադիժը նա հիմնեց յայն

ցաւորի անպատասխանատուութեան վրա, որի ապացուցանելու համար յայտնեց, թէ դեռ 1866 թուականին մեղադրվածը տանջվում էր զինի վրա ստացած վէրքից: Այդ ցաւը այնքան մեծ էր, որ ազդեց մեղադրվածի մտաւոր ընդունակութիւնների վրա: 1874 թուականին երկու բժիշկներ Մակ-Լինին «փափաքաւ» յայտնեցին և խորհուրդ տուին պահել նրան խիստ հսկողութեան տակ: 1880 թուականին, ինչպէս երևում է մեղադրվածի նամակներից, նրան թիւում էր, որ անգլիական ամբողջ ժողովուրդը նրա դէմ դատաւորութիւն է կազմել: Այդ նամակներից մէկի մէջ Մակ-Լին գրում է. «ամենքը այնքան ինձ հետ թշնամացած են, որ կատարեն բարիութենից:» Դա պնդում էր, որ ինքնապաշտպանութեան կամ վրէժխնդրութեան համար «սարսափելի գործ» պէտք է կատարէ: Մակ-Լինին քննելուց յետոյ փակեցին խելագարների տանը, որտեղից նա արձակվեցաւ բժշկվելուց յետոյ, իսկ այդ բժշկութիւնը ժամանակաւոր էր: Հոգեկան հիւանդութիւնների յայտնի բժշկները Շեպարդը և Օրէնը Բիդլինգի բնտնի բժշկի և խելագարների հիւանդանոցի բժշկի հետ, կառավարութեան կարգադրութեամբ քննելով Մակ-Լինին, յայտնեցին, որ նրա մտաւոր ընդունակութիւնները անկասկած առողջ չեն: «

Կրանից յետոյ երգվեալ դատաւորները, պատճառ բերելով Մակ-Լինի խելագարութիւնը, արգարադրին յանցաւորին: Այդ վճիռը համեմատ Մակ-Լինի պէտք է պահվի խելագարների տանը մինչև թագուհու առանձին կարգադրութիւնը: Այդ առիթով «Times» լրագիրը ասում է. «Վիկտորիա թագուհու 45 ամեայ թագաւորութեան ընթացքում նրա կեանքի դէմ ոչ մի գործ չէ արված, որ քաղաքական բնաւորութիւն ունենալու: Թագուհու կեանքի դէմ փորձ են արել այնպիսի խելագարներ, ինչպէս Մակ-Լին, Օկսֆորդ, Ֆրենսիս և Բին:

ամենապիտան արդիւնքը կարելի է սպասել թէ աշակերտաց բաժանումն 2—3 բաժինների, թէ աւարկայից թիւը և թէ վերջապէս ժամանակի պարբերութիւնը (20—35 կիրակի) կարող են արդիւնք լինել կիրակնօրեայ դպրոցական կանոնաւոր և անընդհատ ուսմանը, բայց պիտի աշխատած առաջարկել նրանց անայն դրական աշխատանք: Մեծ մասով մեր կիրակնօրեայ դպրոցների աշակերտները, ինչպէս փորձը մեզ մօտ ցոյց է տալիս, շատ սիրով են կատարում տանը երկու երեք աշխատանք ամենօրեայ ֆիզիքական ծանր աշխատանքներից յետոյ: Անձ թէ ինչպէս է վերաբերվում տեղեկաց ժողովուրդը կիրակնօրեայ դպրոցներին, որոնց իրադրոժումն, ինչպէս փաստերը ցոյց են տալիս, կախումն ունի ոչ թէ ամբողջից, որի փոքրամասնութիւնը անկասկած և սիրով է վաղում դէպի դիտութեան և ուսման փրկարար լուր, այլ նրա ինտելիգենցիայից, որ այդպէս անձնագործութեանը կատարում է իր սրբազան պարտաւորութիւնը ամբողջ վերաբերմամբ: Պիտի խոտորվանա՞ծ, որ կիրակնօրեայ դպրոցների աշխատանքն էլ ուսուցչի ոյժերից բարձր չէ:—40. Բոլոր էլ կրնան իրենց կրօնական—բարոյական և պատմական գրութեան, 40 Բոլոր էլ ընթերցանութեան, 40 Բոլոր էլ թուարանութեան համար, 30 Բոլոր էլ դատարանական աշխատանքի և մի 30 Բոլոր էլ դատարանային համար:

Բայց եթէ ուսուցչին ու աշակերտներ հետաքրքրված են գործով, կարելի է մի ժամ են անել նուիրել դատաւանութեան համար, որ չը սահմանափակվելով անցածների կրկնութեամբ, յառաջ կը տանէ աշակերտաց նախկին Հայաստանի աշխարհագրութեան ու բնական գիտութեանց սկզբունքների մէջ: Սակայն, պիտի նկատած, թէ ինչքան աշակերտը լաւ է պատրաստված դպրոցում, այնքան ևս անկի ընդունակ կը լինի ըմբռնել նոր դասը կիրակնօրեայ դպրոցում և այնքան ևս միջոց կունենայ յառաջ երթալ: Եթէ, որ տարրական ուսման ամբողջ կուրսը կանոնաւոր կերպով է աւանդ

վել և իրացվել ժողովրդական դպրոցում,—ասեց մօտ 200 տարի դրանից առաջ ամենամեծը մանկավարժներից, Ամոս Այոմսիլուրը,—հապա ոչ միայն այն երկուստարեանը, որոնք պիտի մտնեն լատինական դպրոց, այլ և նոքա, որոնք դպրոցից դուրս գալուց յետոյ պիտի պարապեն գիշտական տեսութիւնով, փաճառականութիւնով, արհեստով և այլն, երբեք իրանց կեանքի մէջ չեն պնտաւի այնպիսի մի նոր բանի, որի մասին նոքա փոքր չէ շատէ տեղեկութիւն ստացած չը լինեն և, հետեւապէս, այն ինչ որ նոքա տեսած կը լինեն, այն ամենը, որի մասին նոքա լսած կամ կարդացած են գրքում, այդ ամենը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մանրամասն կամ մասնագիտական մեկնութիւններ արդէն ծանօթ իրենց: Ահաւասիկ հէնց տարրական ուսման կուրսը «Իւրացնելու» համար են առաջարկվում կիրակնօրեայ կրկնական դասեր: Եթէ մենք հետաքրքրել կարողացանք հասակաւոր աշակերտաց, նոքա երկար ժամանակ չեն հետանայ դպրոցից, չեն հետանայ, մինչև որ կըզգան որ բարոյապէս ու մտաւորապէս այնքան կազդուրված են, որ էլ կարողութիւն չունեն կիրակնօրեայ դպրոցների մէջ՝ մրցելու չըջապատել խաւարի ու տղիտութեան հետ: Այժմ տեսնենք թէ ուսուցչից ինչպէս պիտի հետաքրքրէ հասակաւորներին: Բոլոր աւարկաների ուսուցանելու եղանակները ամբողջապէս կը մնան մի և նոյնը, որոնցով որ ուսուցչիչը օգտվում է տարրական դպրոցում. բայց նորան հարկաւոր է փոփոխել անշուտ դասերի բովանդակութիւնը, ըստ որում այն, ինչ որ հետաքրքրում է երեխային, չէ կարող հետաքրքրել և հասակաւորին: Շատ անտեղի կը լինէր օրինակ Տէր-Ղևնդեանից («Մարկին լեզու» աւարկայ գործածութիւնը կիրակնօրեայ դպրոցներում. աւելի հետաւանութիւն արած կը լինէր ուսուցչիչը, եթէ զրուարանալէ կըզբերէ ընտրութիւնը թողնէր նոքա ազատ կամբէն: Արականօրեայ դպրոցներում կարգաւոր համար պիտի ընտրած այնպիսի գը-

«Daily News» ասում է. «Մտածել անգամ չէ կարելի, որ մի խակական անգլիացի, շատախաբի և մինչև անգամ իրանդացի գիտակցաբար փորձ անէր թագուհու կեանքի դէմ: Երբ թագուհուն յայտնեցին Ֆրենսիսի գործած առաջին յանցաւոր փորձի մասին, նա քաջութեամբ յայտնեց, որ նա թող չի տայ որ և է անգլիկին կամ իսկ լացնորին թագուհուն պալատի մէջ փակված պահէ: Թագաւորապետութեան երկրորդ փորձից յետոյ Ֆրենսիս մահաւան պատմի դատապարտվեցաւ, բայց դատաւժիռը չը կատարվեցաւ: Այնուհետեւ 22 տարիների ընթացքում ոչ մի չարագործութիւն չէ կատարվել նորին մեծութեան կեանքի դէմ: Պէտք է յուսալ, որ այսուհետեւ էլ թագուհին ապահով կը լինի:»

«Standart» լրագիրը նկատում է. «Մակ-Լինի գործը դատարանի մէջ շատ շուտ վերջացաւ և այնպիսի դատաւժիռով, որ ամեն կողմից բաւականացուցիչ է: Եթէ դատարանի մէջ յայտնվէր, որ Մակ-Լին, թագաւորապետութեան փորձ անելով, թելադրված էր մինչև անգամ ամենաանմիտ քաղաքական կամ սօցիալական դադափանքներից, նրա գործը հասարակութեան վրա ծանր ապաւորութիւն կը թողնէր: Մակ-Լինի մասին դատաւժիռը հանգստացրեց հասարակութեանը: Պէտք է միայն շնորհակալ լինել Նախանձմութեանից, որ այս անգամ էլ ազատեց թագուհու կեանքը, որ իր առաքինութիւններով և անսահման հաւատարմութեամբ անգլիական ազգային շահերին շատ է նպաստել Անգլիայի բարօրութեանը:»

ՆԱՄԱԿ ԹԻՒՌԻՍՏԻՅ

Կ. Պոլս, 13 ապրիլի

Անցեալ աշնան կը դէլի թէ մինչև անգամ իրացուցաւ զարուն ճաճիկ-Հայաստանի բարեկարգութեանը համար ոչինչ պիտի ըլլայ: Մեր ուսմանից մէկ երկու դիւանագէտները, որ կը խաբուէին ու կը խաբէին, շատ նեղացել էին այս հրաշալիութիւնները, որ կը խանդաւրէ իրենց հաշիւները: Այս րեանը, որոնցից կարելի լինի օգտուէտ տեղեկութիւններ քաղել, այդ գրեւորքը թէ իրանց հիւսուածքով և թէ բովանդակութեամբ պիտի լինեն այնքան թեթեւ և այնքան իմաստալից, որ ընթերցանութիւնը, աշակերտին հետաքրքրութիւն պատճառէր: Արեւմտեան դպրոցների նպատակն է, ի միջի այլոց, մատչելի առնել աշակերտին կարողութեան չափով ամեն մի հասարակ, պարզ և աշխարհիկ լեզուով դրած դիրք կամ լրագիր: Բայց այդ տեսակ գրքեր մեր մանկական դասարաններում մէջ այնքան քիչ են, այնքան աղքատ, իսկ եղանակներ էլ այնքան անճշտ, թէ լեզուով և թէ բովանդակութեամբ, որ մարդ գիտաբարանում է առ զոքոք աշակերտի ձեռք, ժամանակով, երբ մնալուստ գրութիւն կունենան կիրակնօրեայ դպրոցները, երբ մեր մէջ ընդհանրականութիւն կը ստանան ժողովրդական լսարանները ու երկկողմները, այն ժամանակ այդ տեսակ պահանջ կը դարձնի մեր մէջ ինքն ըստ ինքեան, կը գտնվեն մարդիկ, որոնք կը գրեն և գիտական գրադէտի և քաղաքի արհեստաւոր դասի համար:

Ի նկատի առնելով ուսման հիմնական օրէնքը, որով դատաւորութիւնը պիտի յարմարացնէ աշակերտի մտաւոր ոյժերին, կիրակնօրեայ դպրոցի ուսուցչիչը դրաւոր վարժութիւնների համար պիտի ընտրէ այնպիսի թեմաներ, որոնք անմիջապէս վերաբերում են աշակերտի կեցութեանը. թուականական խնդիրների ընտրութիւնն էլ պիտի յարմարացնէ նրա կեցութեանը, ի նկատի առնելով այն, որ եթէ ուսուցչիչը կը զբաղեցնէ հասակաւորին այն բանով, որ հետաքրքրում է միայն երեխային, նա այն ժամանակ ոչ միայն աշակերտի ինքնասիրութիւնը կը շարժէ, այլ և կը ստորացնէ նրան իր աչքերի առաջ և կը ստիպէ ձանձրանալ այնպիսի մի դպրոցում, որ վերաբերվում է ամենքին բոլորովին միատեսակ թէ չափահասներին և թէ անհասանկիր, առաջարկելով երկուսին էլ այն կերպով, որ նշանակված է միայն փոքրահասակների համար: Արեւմտեան

տեղեկութիւնը շատ վտանգի աղբիւրն առած է, և դժբաղդաբար ճիշտ ելաւ: Այսօր ալ կրնամ ըսել թէ այս շարժում բարեկարգութեանը հարցը առաջին տեղը սկսաւ բռնել խնդրոյ մէջ: Գերմանիայի շարժիւ սուլվանը համոզուեցաւ թէ բարեկարգութեանը գործադրութիւնը անհրաժեշտ է և վտանակաւ չէ Թիւրքիոյ: Առանց նախարարաց միջամտութեանը սուլվանը յանձնաժողով մը կազմեց շուտով պատրաստելու բարեկարգութեանը ծրագիր մը և ի գործ դնելու: Այդ բարեկարգութիւնները միայն Հայաստանի համար չը պիտի ըլլան, այլ ընդհանուր դատաւայ համար: Հայերը երբեք արդէն չեն եղած որ ուրիշներուն բարիք չըլլայ, բաւական է որ մեր գործը կարգադրեն: Այսօր «Մէսէնճըր» բաւական տեղեկութիւն կուտայ այս խնդրոյն վրայ և կըսէ թէ մասնաժողովը պիտի կազմուի: Հաւանական նախագահը, կըսէ, պիտի ըլլայ Սահի բաշա, նախկին կառավարիչ Արշալուիզադուրի (և ոչ թէ Ա. Նախարար Սաիդ բաշան) իմ ստացած տեղեկութիւններս քիչ շատ կը տարբերին անգլիացի թերթին տուած լուրերէն: Բարեկարգութեանը մասնաժողովը ոչ թէ պիտի կազմուի, այլ կազմուած է: Նախագահը Մուխթար բաշան է: Տաղեան Արթին պէյն այդ մասնաժողովի անդամ ըլլալը ստոյգ չէ, թէպէտ «Մէսէնճըր» կը գրէ: Մասնաժողովը շարունակ նիստ կընէ և առ առաւելն ամսուան մը մէջ պիտի աւարտէ իր աշխատութիւնները: Այս անգամ սուլվանի արաւմադրութիւններն շատ անկեղծ են, բայց հիւանդութիւնը մէկ մը երկրին ուրիշներուն մէջ թափանցել է, նայեմք ինչպէս պիտի բժշկուի: Ժամանակը կը պակսի երկար գրելու, կը խրկեմ «Մէսէնճըր» հատուածը: Պատրաստուած ծրագիրներուն վրայ դժուարաւ տեղեկութիւն պիտի ստացուի, ստոյգ լսածներս կը հաղորդեմ:

Ազգ. ժողովոյ դիւաններու ատենապետները գումարուեցան անցեալ հինգշաբթի: Բան մը չըլլին: Այս հինգշաբթի ալ պիտի դաւանարուին. հաւանական է որ Ազգ. ժողովոյ գումարումը որոշեն: Գործերը այնպէս մը կարգի դրած են որ պատրիարքի հրաժարականը ընդունուի: Ժողովրդային յուզմունքը կը կատկածուի:—Եթէ հրաժարականը ընդունուի անգապա՞մը պիտի ընտրուի: Եթէ միայն առաջնորդ Մեքիսեդեկ եպիսկոպոսն համար կըսեն, բայց այս երեկոյ ամենին հաւանական ընտրելի տեղապա՞ց ցոյց կուտային Արթին եպիսկոպոսը, Կարնայ նախկին առաջնորդը, այժմ երուսաղէմ:

Հայկակ

Նորեայ դպրոցների աշակերտները, ինչպէս և ամենօրեայ դպրոցների աշակերտները, չը պիտի անդործ մնան դպրոցում, և այդ պատճառով նույնիսկ իւրաքանչիւրին պիտի առաջարկել աշխատանք, այնպիսի աշխատանք, որ զարթնցնէ աշակերտի մէջ հետաքրքրութիւն և մի և նոյն ժամանակ պահանջէ նրանից ճիշտ, մտաւոր աշխատանք: Արեւմտեան դպրոցների գլխավոր օգուտը կայանում է ոչ միայն նրա մէջ թէ ուսուցչիչը ինչպէս կը սլարապէ աշակերտաց հետ դպրոցում, որչափ նրա մէջ թէ ինչպէս և որ ամբողջան կազդէ ու կը ներգործէ նոքա վրա, որ աշակերտները կանոնաւոր կերպով յաճախեն կիրակնօրեայ դպրոցներ: Արեւմտեան սուր պարտականութիւն և մրցան լայն ապարդի ուսուցչի գործունեութեան համար—կանգնել առաջնորդ մեր դեռահաս և մանուկ սերունդին: Տայ Աստուած, որ կիրակնօրեայ դպրոցները մեղմում քացաւորութիւններ չը լինեն, ցանկանում ենք ուսուցչին այնպիսի ազդեցութիւն մեր հասարակութեան վրա և հեղինակութիւն, որ նա աշակից առնելով իրան հասարակութեան նոր ոյժերը բազմապէս կիրակնայ դպրոցների և լսարանների թիւը. ցանկանում ենք և այն, որ լուսաւորեալ և ապահոված չըլլանի մէջ գտնվին այնպիսի ընդունակ մարդիկ, որոնք ոչ միայն ըմբռնեն լուսաւորութեան կարեւորութիւնը ու նրա ընդհանրականութիւնը մեր ժողովրդի մէջ, այլ և աշխատեն բնաւ մեր մէջ ժողովրդական լուսաւորութեան գործին նպաստող այլ և այլ միջոցներ,—լսարաններ, երկկողմներ, ընթերցարաններ, գրադասարաններ... Ժամանակ է հասկանալ, որ մեր ամենօրեայ դպրոցների պատեւը կը քանդվին, եթէ չաշխատենք շուտով լրացնել նրանց կիրակնօրեայ դպրոցներով, լսարաններով: Ժողովուրդը ուսում և գիտութիւն է խնդրում. շտապեմք վարվել այնպէս որ նրա ազդեցութիւնը, իրեն մի ծանր յանցանք, չը բարձրվի մեր և ապագայ սերունդի վրա:

Շամախի.

Ա. Գալուստեանց

